28
ՕԳՈՍՏՈՍ
2023

Luys Լույս®

ԱՐՑԱԽ. ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱ՞ՇՔ, ԹԷ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՂԵՏ

ԱՐՑԱԽ. ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՇՔ, ԹԵ՞Ղ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԱՂԵՏ

Տիգրան Թորոսյան
Քաղաքական գիտությունների դոկտոր,
Հեռանկարային հետազոտությունների
և նախաձեռնությունների կենտրոն

Հոգևոր ծուլությամբ պայմանավորված մտավոր մակերեսայնությունը, ահա, խեղդում է մեզ: Այսօր մեր կյանքի որ կողմն էլ վերցնենք, գիտականության փոխարեն հանդիպում ենք բանդագուշանքի, մտածումի փոխարեն՝ հույզի, ձևի փոխարեն՝ քաոսի, կազմակերպության փոխարեն՝ անկանոնության:

Հայկ Ասատրյան

ՆԱԽԱԲԱՆ

Վերջին շրջանում հաճախակի են դարձել Արցախում սովի իրական սպառնալիքի կանխմանն ուղղված տարատեսակ գործողությունները միջազգային կազմակերպությունների գրասենյակների առջև, հայտարարություններն ու դիմումները «միջազգային հանրությանը», ՄԱԿ-ին, Մինսկի խմբի համանախագահներին, Եվրամիությանը, Ռուսաստանին և այլն: Դրանց այս կամ այն ձևով մասնակցում են նաև Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքական ղեկավարները: Ստեփանակերտում ԱՀ նախագահ Ա. Հարությունյանը միացել էր նստացույց անողներին (ինչն անհեթեթություն է և վկայում է պետականության, սեփական դիրքի ու պատասխանատվության ընկալման լիակատար բացակայության մասին), իսկ Ազգային ժողովի նախագահի անհավասարակշիռ վարքը, ի վերջո, հանգեցրեց պաշտոնանկության և այլն: ՀՀ իշխանություններն էլ մերթ հայտարարում են քառակուսի կիլոմետրերով Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը ճանաչելու մասին, մերթ մեղադրում են ռուս խաղաղապահներին, մերթ «միջազգային հանրությանն» ընդհանրապես, մերթ էլ դժգոհում են Եվրամիության շրջանակներում «բանակցությունների»

անարդյունավետությունից[1] ու Ալիևի մտադրությունից՝ «խաղաղության» պայմանագիր ստորագրելուց հետո Հայաստանին նոր տարածքային պահանջներ ներկայացնելու վերաբերյալ[2], բայց անմիջապես մանտրայի նման կրկնում են, որ խաղաղությունն իրենց համոզմունքն է[3] և այլն: Պատկերն ամբողջացնում են իրենց անգործունակությունը բազմիցս ապացուցած ընդդիմության տարատեսակ ներկայացուցիչներ, որոնք դժգոհում են ժողովրդի անտարբերությունից: Վերջին շրջանում «ժողովրդի անտարբերությունից» դժգոհում են նաև նրանք, ովքեր, թվում է, գործի բերումով պետք է ճիշտ ընկալեին իրավիճակի պատճառներն ու հետևանքները և կանխեին անգործության մեղադրանքը ընդդիմությունից ժողովրդին ուղղորդելը:[4] Դրա կողքին՝ 97 տոկոսով Արցախը Ադրբեջանի կազմ վերադարձնելը մերժող, 2021թ. իշխանությանը 75 տոկոսով չընտրած ու ընդդիմությունից բազմիցս հիասթափված Հայաստանի Հանրապետության ժողովուրդն ու 2020թ. աղետի մատնված, 9 ամիս բացարձակ շրջափակման ենթարկված ու անմարդկային փորձությունները հերոսաբար հաղթահարող Արցախի ժողովուրդը: Այս ծայրահեղ հակոտնյա պատկերը՝ մի կողմից՝ ժողովրդի, մյուս կողմից՝ իշխանության և ընդդիմության միջև, վկայում է, որ իրավիճակը, իսկապես, չափազանց բարդ է: Ակնհայտ է, որ այն հնարավոր չէ հաղթահարել հուսաբեկության հասցնող արկածախնդիր քաղաքականությամբ, անհեթեթ դժգոհություններով ու ողջամտությունից զուրկ, փակուղի տանող դատողություններով: Պահանջվում է ծայրահեղ լրջություն ու պատասխանատվություն, գործողությունների գրագիտություն ու ճշգրտություն, կազմակերպվածություն ու գիտելիքների և ունակությունների առկայություն՝ իրավիճակի սթափ, մասնագիտական գնահատման և արժանապատիվ, իրական

---

[1] «Աուդիտ» կոչվող փաստաթուղթ ենք պատրաստել. Փաշինյանը բրյուսելյան պայմանավորվածությունների մասին գաղտնիք բացահայտեց, 01.08.2023, https://news.am/arm/news/773608.html
Խաղաղությունն իմ համոզմունքն է. սա այն է, ինչին ես հավատում եմ, 01.08.2023, https://news.am/arm/news/773603.html

[2] Տպավորություն է՝ Բաքուն մտադիր է խաղաղության պայմանագիր ստորագրել, հետո տարածքային պահանջներ առաջադրել ՀՀ-ին, 01.08.2023թ., https://news.am/arm/news/773834.html

[3] Խաղաղությունն իմ համոզմունքն է. սա այն է, ինչին ես հավատում եմ, 01.08.2023, https://news.am/arm/news/773603.html

[4] Ընդամենը 100 ճիշտ օր և մեր հասարակությունն անճանաչելիորեն կփոխվի, https://news.am.arm/news/775398.html,
Արամ Ա-ն առաջարկեց այս ճակատագրական փուլում նոր ներկայացուցչական մարմին ստեղծել Ադրբեջանի հետ բանակցելու նպատակով, https://news.am/arm/news/775303.html

լուծումների ապահովման համար: Կա՞ն արդյոք նման լուծումներ: Այո՛, կան, և դրանց հասնելու հնարավորությունները կդիտարկվեն ստորև:

1. ԻՐԱՎԻՃԱԿԸ

Դասագրքային ճշմարտություն է, որ ցանկացած հակամարտության կարգավորման գործընթացը բարդ, միջգիտակարգային մոտեցումներ պահանջող խնդիր է երկու գլխավոր բաղադրիչներով՝ իրավական ու քաղաքական: Հետևաբար, հնարավոր զարգացումները գնահատելու համար անհրաժեշտ է պարզել, թե արդյոք ինչպիսի՞ն է իրավիճակն այդ բաղադրիչների տեսակետից: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ ներկայիս իրավիճակը հետևանք է 2018թ. իշխանափոխությունից հետո Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի նկատմամբ Հայաստանի Հանրապետության դիրքորոշման արմատական փոփոխության, ինչը հանգեցրեց այդ գործընթացի խաթարմանը, առիթ դարձավ 2020թ. ադրբեջանաթուրքական ռազմական ագրեսիայի համար, իսկ ավելի ուշ՝ հանգեցրեց բանակցային գործընթացի ձևաչափի ու էության լիակատար աղճատման, բանակցային խնդրի նենգափոխման ու աղետալի զարգացումների:[5] Հետևաբար անհրաժեշտ է թե՛ իրավական, թե՛ քաղաքական բաղադրիչների տեսակետից գնահատել իրավիճակի փոփոխությունը 2018թ. իշխանափոխության արդյունքում և ձևակերպել կարգավորման գործընթացի էության վերականգնումն ապահովող քայլերը:

Իրավական բաղադրիչ

Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման գործընթացը անցյալ դարի 90-ական թվականների մի քանի անհաջող փորձերից հետո իրական հիմքեր ստացավ 2005 թվականից, երբ գլխավոր խնդրի՝ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշման հիմքում դրվեց ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, որը միջազգային իրավունքում ունի համապարտադիր բարձրագույն իրավական նորմի կարգավիճակ:[6] Ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի հիմք

[5] Թորոսյան Տ., 2020թ. պատերազմ. նախադրյալները, հետևանքները և աղետի հաղթահարման հնարավորությունները, https://luys.am/img/artpic/small/17421d60c00deb99e93e2020Թ.-ՊԱՏԵՐԱԶՄ.-ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ-ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ-ԵՎ-ԱՂԵՏԻ-ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ-ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.pdf.

[6] Rubin, A. P., Actio Popularis, Jus Cogens and Offenses Erga Omnes?, *New England Law Revew,* 2001, 35. 2: 265-280.

հանդիսացող ՄԱԿ կանոնադրության 1-ին հոդվածը համարում է միջազգային հարաբերությունների հիմնասյուներից մեկը[7], որի վերաբերյալ այդ հարաբերությունների կարգավորման տեսակետից հիմնարար նշանակություն ունեցող «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» կոնվենցիան սահմանում է. «Յուրաքանչյուր ժողովուրդ ունի ինքնորոշման իրավունք, որի հիման վրա որոշում է իր քաղաքական կարգավիճակը...»[8]: Իսկ ինքնորոշման իրավունքի իրացման վերաբերյալ միջազգային իրավունքի գլխավոր փաստաթուղթը՝ «ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա պետությունների միջև բարեկամական հարաբերություններին ու համագործակցությանը առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը», սահմանում է, որ ինքնորոշվող ժողովուրդն «իր կամքի ազատ արտահայտմամբ ինքն է որոշում իր քաղաքական կարգավիճակը՝ որպես հետևյալ չորս տարբերակներից որևէ մեկը.

-անջատվել և ստեղծել անկախ պետություն,

-անջատվել և միանալ որևէ անկախ պետության,

-անջատվել և ստեղծել ասոցացված հարաբերություններ որևէ անկախ պետության հետ,

-ցանկացած այլ կարգավիճակ, որ կընտրի իր համար այդ ժողովուրդը»[9]:

Արցախի վերաբերյալ այս նորմերը կիրառվել են սկսած բանակցային փաստաթղթի այն տարբերակից (Մադրիդյան սկզբունքներ), որը համանախագահները 2007թ. նոյեմբերին ներկայացրել են Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարներին՝ որպես կարգավորման երեք հիմնարար սկզբունքների և բանակցային քննարկումների առարկա վեց տարրերի համալիր, որը պահպանվել է փաստաթղթում մինչև 2021թ., երբ վերջնականորեն խաթարվեցին բանակցային ձևաչափը, գլխավոր խնդրի ձևակերպումն ու ընդհանրապես ողջ գործընթացը: Այդ 14 տարիների ընթացքում հակամարտության կողմերը,

---

Torosyan T. Conflict Resolution in the Framework of the International Law. Case of Nagorno- Karabakh. Yerevan, 2010.

[7] Charter of the United Nations, https://treaties.un.org/doc/publication/ctc/uncharter.pdf

[8] International Covenant on Civil and Political Rights, General Assembly resolution 2200A (XXI), 16 December 1966, https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-civil-and-political-rights

[9] 2625 (XXV). Declaration on Principles of International Law Concerning Friendly Relations and Co-operation among States in Accordance with the Charter of the United Nations, http://un-documents.net/a25r2625.htm

համանախագահները, համանախագահող երկրների ղեկավարները, ՄԱԿ-ը, ԵՄ-ն, Եվրոպայի խորհուրդն ընդունել են բազմաթիվ փաստաթղթեր, որոնցում արձանագրվել է, որ Լեռնային Ղարաբաղի դեպքն ինքնորոշման հակամարտություն է և գլխավոր խնդիրը՝ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշումը, պետք է իրականացվի միջազգային իրավունքում հիմնարար նշանակություն ունեցող ինքնորոշման սկզբունքի հիման վրա: Անգամ մանրամասնվել է դրա իրականցման մեխանիզմը, որը 2021թ. հունվարին, ի պատասխան հերյուրանքների, թե Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ բանակցային փաստաթուղթը դրույթներ չի պարունակել, հրապարակել է ռուս համանախագահ Ի. Պոպովը. «Կազանյան փաստաթղթի հետ շատ բաներով համընկնող այդ պլանի հիմքում ընկած են ԼՂ կարգավորման բազային սկզբունքները, որոնց շարքում առաջին փուլում հինգ շրջանների վերադարձն է Ադրբեջանին, իսկ երկրորդ փուլում՝ երկու շրջանների, ընդ որում, հատուկ ընդգծում եմ, դա կապելով Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հետ: Առաջին փուլի Երևանի հետաքրքրություններն արտացոլող տարրերից են Լեռնային Ղարաբաղի՝ իր բնակչության լիարժեք կենսագործունեության ապահովման իրավունքի ընդունումը, ԼՂ ներկայացուցիչների մասնակցությունը ԵԱՀԿ նիստերին, շրջափակման վերացումը, ուժի չկիրառման վերաբերյալ կողմերի պարտավորությունների ստանձնումը և այլն... Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի խնդրի լուծման տարբերակներին, ապա վերջին տարիներին բանակցությունների սեղանին գտնվող առաջարկները՝ որպես վերջնական նպատակ նախատեսում էին, մեջբերում եմ, «Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի որոշումը՝ կողմերի համաձայնեցրած ժամկետներում ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի հովանու ներքո համաժողովրդական քվեարկության անցկացում, որը կարտահայտի Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամարտահայտությունը և կունենա իրավականորեն պարտադիր բնույթ՝ միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների համաձայն: Ընդ որում, քվեարկության դրվող հարցը կամ հարցերը որևէ ձևով չեն սահմանափակվի, իսկ քվեարկության ցանկացած արդյունք կողմերը կհարգեն»: Ի դեպ, Լաչինի միջանցքի լայնությունն ու կարգավիճակը ևս առաջարկվում էր դիտարկել միայն երկրորդ փուլում՝ հաշվի առնելով Քելբաջարի և Լաչինի շրջաններն Ադրբեջանին վերադարձնելը»[10]:

[10] Ответ российского сопредседателя в Минской группе ОБСЕ, Посла по особым поручениям МИД России И.В.Попова на вопрос СМИ относительно статьи Премьер-министра Армении Н.В.Пашиняна

Իհարկե, սա չէր նշանակում, որ Արցախում համապատասխան հանրաքվեի անցկացումից հետո Ադրբեջանը ճանաչելու էր Արցախի անկախությունը. այնպես, ինչպես ինքնորոշման իրավունքի հիման վրա ստեղծված որևէ պետության անկախությունը չի ճանաչել որևէ մետրոպոլիա, որից այն անջատվել է: Որևէ պետության անկախության միջազգային ճանաչումը ոչ թե այս կամ այն պետության կամ մետրոպոլիայի կողմից ճանաչումն է, այլ անդամակցությունը ՄԱԿ-ին, ինչը անվտանգության նոր մեխանիզմներով է օժտում պետությանը: Մադրիդյան սկզբունքներ կոչված, տարիների ընթացքում լրամշակված ու մինչև 2022թ. բանակցային սեղանին գտնված փաստաթուղթն արժեքավոր էր այն պատճառով, որ՝

1) նախատեսում էր հակամարտության լուծում միջազգային իրավունքի հիման վրա,

2) միջնորդությունն իրականացվում էր նման լիազորություն ունեցող երկու (ՄԱԿ և ԵԱՀԿ) միջազգային կազմակերպություններից մեկի՝ ԵԱՀԿ-ի հովանավորությամբ,

3) միջնորդները ՄԱԿ Անվտանգության խորհրդի 5 մշտական անդամներից երեքի ներկայացուցիչներն էին,

4) լուծումը պարտադիր էր լինելու բոլորի համար, հետևաբար այն վավերացվելու էր ՄԱԿ-ում՝ որպես ՄԱԿ-ի անդամակցության հարց,

5) խաղաղապահներն ունենալու էին միջազգային կարգավիճակ՝ համապատասխան լիազորություններով, պարտավորություններով և ազդեցության մեխանիզմներով,

6) ՀՀ-ն ԼՂՀ-ին կապող տարածքը կարող էր լինել ոչ թե ներկայիս նեղ միջանցքը, այլ դեռևս առաջին պատերազմից հետո Ադրբեջանի օկուպացիայի ներքո հայտնված տարածքների փոխհատուցումը Լաչինի և Քելբաջարի շրջանների հաշվին,

7) քանի որ փաստաթուղթը նախատեսում էր Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի վերաբերյալ հանրաքվեի անցկացում Լեռնային Ղարաբաղի բնակչության շրջանում՝ առանց հանրաքվեի դրվող հարցի սահմանափակման, դա նշանակում էր, որ հանրաքվեի արդյունքը միանշանակորեն լինելու է անկախությունը (անգամ ադրբեջանցի փախստականների վերադարձի դեպքում նրանց թիվը չպետք է գերազանցեր ԼՂՀ բնակչության 20 տոկոսը՝ մինչև հակամարտությունը ԼՂԻՄ-ի բնակչության համամասնությանը համապատասխան):

«Истоки 44-дневной войны»,
https://www.mid.ru/ru/foreign_policy/news//asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/4519475

Հետևաբար, բանակցային փաստաթղթի հիմքում դրված մեխանիզմը կարգավորման գործընթացը տանում էր միջազգային իրավունքի հիման վրա միջազգային հանրության կողմից պարտադրված լուծման՝ ՄԱԿ-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անդամակցության, հետևաբար և անկախության միջազգային ճանաչման ուղղությամբ, որով անցել են Արևելյան Թիմորը, Հարավային Սուդանը, Էրիթրեան, ինքնորոշման ճանապարհով անկախացած և միջազգայնորեն ճանաչված այլ պետություններ:

Կարգավորման այս սխեման մշակել էին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների հիման վրա: Թեև 2022 թվականից այդ կառույցը որևէ գործունեություն չի ծավալել, սակայն ԵԱՀԿ-ն այն չի լուծարել: Այդուհանդերձ, Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովը 2022թ. ապրիլին հայտարարել է, որ հակառուսականության ալիքի ազդեցությամբ Արևմուտքը հրաժարվել է Մոսկվայի հետ համագործակցությունից, այդ թվում՝ Մինսկի խմբի շրջանակներում, հետևաբար լուծարել է Մինսկի խումբը, թեև ավելացրել է նաև, որ չգիտի թե ինչպիսի ճակատագիր կունենա այդ կառույցը:[11] Իրականում նախկին համանախագահող երկրները 2022 թվականից հիմնովին փոխել են «բանակցությունների» ձևաչափը և հիմնախնդիրը՝ առանձին-առանձին հանդիպումներ կազմակերպելով երեք տարբեր հարթակներում՝ Վաշինգտոնում, Բրյուսելում ու Մոսկվայում Հայաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների հետ՝ հայ-ադրբեջանական «խաղաղության պայմանագիր» կնքելու նպատակով: Ընդ որում, Բրյուսելում որպես միջնորդներ հանդես են գալիս Եվրոպական խորհրդի նախագահ Շ. Միշելը, Ֆրանսիայի նախագահ Է. Մակրոնը և երբեմն՝ Գերմանիայի կանցլեր Օ. Շոլցը, որոնք այդ գործընթացում որևէ լիազորություն չեն ստացել Եվրամիությունից, որևէ փորձառություն ու գիտելիք չունեն հակամարտությունների կարգավորման վերաբերյալ: Ավելին, այդ երեք հարթակներից որևէ մեկում չեն սահմանվել նաև միջազգային իրավունքի սկզբունքներ, որոնց շրջանակում պետք է քննարկվեն խնդիրները և ձևակերպվեն լուծումները:

Վերջին հանդիպումները թե՛ Վաշինգտոնում, թե՛ Բրյուսելում, թե՛ Մոսկվայում որևէ, թեկուզ և փոքր, արդյունքի չեն հանգեցրել: Պատահական չէ, որ Ռուսաստանի ԱԳՆ ներկայացուցիչ Դ. Գոնչարը ՏԱՍՍ-ին տված հարցազրույցում լուրջ

[11] Արևմուտքը չեղարկել է ԵԱՀԿ Մինսկի խմբի եռանախագահությունը, 08.04.2022, https://news.am/arm/news/695699.html

թերահավատություն է հայտնել Բրյուսելում ու Վաշինգտոնում պատրաստվող նախագծերի վերաբերյալ, հատկապես «Ադրբեջանի իրավական դաշտում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության անվտանգության ապահովման և հանրաճանաչ իրավունքների հարգման»[12] հետ կապված համաձայնությունների ապահովման առումով և պնդում է, որ նախագծերը դեռևս «հում» են: Սակայն խնդիրը միայն նախագծերի որակը չէ և անգամ այն, որ նույնպիսի նախագիծ է առաջարկել Մոսկվան[13]: Մեջբերումից ակնհայտ է, որ նախագծերի հիմքում դրված է Արցախը Ադրբեջանի կազմ վերադարձնելու «գաղափարը»: Ակնհայտ է, որ Մինսկի խմբի շրջանակներում 14 տարի իրականացված իրավական առումով անթերի բանակցային գործընթացը, ձևաչափը, նպատակը, սկզբունքներն ու փաստաթուղթը փոխարինվել են արհեստական, որևէ հիմք չունեցող «գաղափարներով», որոնք մի կողմից՝ ավերել են հակամարտության կարգավորման գործընթացը, մյուս կողմից՝ հնարավորություն են տալիս 2020թ. ռազմական ագրեսիայի դիմած ու պատերազմական հանցագործություններ կիրառած ադրբեջանաթուրքական տանդեմին շարունակելու հանցագործությունները՝ նպատակ ունենալով դրանք հասցնել ավարտին՝ որպես արցախահայության ցեղասպանություն:[14]

2022թ. հոկտեմբերին Պրահայում Շ. Միշելի և Է. Մակրոնի միջնորդությամբ տեղի ունեցած հանդիպման ժամանակ փորձ է արվել «իրավական» փաթեթավորում տալ այդ հանդիպումների շարքին՝ դրանց հիմքում դնելով 1991թ. Ալմա-Աթայի հռչակագիրը ԱՊՀ կազմավորման վերաբերյալ. «Հայաստանն ու Ադրբեջանը հաստատեցին իրենց հանձնառությունը ՄԱԿ-ի կանոնադրությանը և 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրին, որոնց միջոցով երկու կողմերն էլ ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը»:[15]

Ինչո՞ւ է միջազգային իրավունքի շրջանակներում որևէ իրավական ուժ չունեցող այս «անմեղ» ու հակամարտությունների կարգավորման հետ որևէ կապ չունեցող

---

[12] Интервью директора Четвертого департамента стран СНГ МИД России Д.В.Гончара информационному агентству ТАСС, 4 августа 2023 года, https://mid.ru/ru/foreign_policy/news/1899623/

[13] Այս փաստաթուղթն է առաջարկել Լավրովը հուլիսի 25-ին. Տիգրան Պետրոսյան, 16.08.2023, https://news.am/arm/news/775747.html

[14] Թորոսյան Տ., Նոր աշխարհակարգի ձևավորման ազդեցությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վրա. ինքնորոշում, թե ցեղասպանություն, https://www.luys.am/img/artpic/small/57f883df1b33a9c4c034Ինքնորոշ.թեցեղասպան.-Լույս.pdf:

[15] ՀՀ-ն ու Ադրբեջանը ճանաչում են միմյանց տարածքային ամբողջականությունը. Պրահայում քառակողմ հանդիպման հայտարարությունը, 07.10.2022, https://news.am/arm/news/723892.html

փաստաթուղթը[16] հայտնվել Պրահայի հայտարարությունում ու հետագայում հիմք է դարձել կարգավորման գործընթացի համար չափազանց վտանգավոր նենգափոխումների, որոնք արել են ոչ միայն նման գործընթացներին մասնակցության փորձ ու դրա համար անհրաժեշտ գիտելիքներ չունեցող բրյուսելյան նորահայտ «միջնորդները», Ալիևը, այլև Ռուսաստանի ու Հայաստանի ներկայացուցիչները:

Ս. Լավրովը կարծում է՝ քանի որ Հայաստանը և Ադրբեջանը ստորագրել են Պրահայի հայտարարությունը, որտեղ արձանագրել են, որ ցանկանում են «խաղաղության պայմանագիր» պատրաստել ՄԱԿ կանոնադրության և 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրի հիման վրա, ապա դա կանխորոշում է, թե ինչպես պետք է մոտենալ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակին: Ըստ նրա, այդ հռչակագիրը ազդարարում է, որ կողմերը «հաստատում են սահմանների անխախտելիությունը այն սահմաններում, որոնք գոյություն ունեին Խորհրդային Միության հանրապետությունների միջև, իսկ այդ ժամանակ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Ադրբեջանի մաս էր»: Փորձառու դիվանագետը թույլ է տվել մի քանի կոպիտ սխալ: Հեշտ է համոզվել, որ այդ կես էջանոց հռչակագիրը սոսկ հռչակում է ԱՊՀ կազմավորումը և հայտարարում, որ այդ կազմակերպությունը գործելու է միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա՝ «ձգտելով կառուցել ժողովրդավարական իրավական պետություններ, որոնց միջև հարաբերությունները կզարգանան պետական ինքնիշխանության ու ինքնիշխան հավասարության, **ինքնորոշման անքակտելի իրավունքի**, իրավահավասարության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքների, **ուժի և ուժի սպառնալիքի կիրառումից, տնտեսական և ցանկացած այլ մեթոդով ճնշումից հրաժարման**, վեճերի խաղաղ կարգավորման, մարդու իրավունքների, այդ թվում՝ նաև ազգային փոքրամասնությունների իրավունքների հարգման, հանձնառությունների պարտաճանաչ կատարման և մյուս հանրաճանաչ սկզբունքների ու միջազգային իրավունքի նորմերի հիման վրա, ...ընդունելով և հարգելով միմյանց **տարածքային ամբողջականությունն** ու գոյություն ունեցող սահմանների անխախտելիությունը, ...հայտարարում են Անկախ պետությունների կազմավորման մասին»[17]:

[16] Алма-Атинская декларация, 21 декабря 1991 г., https://www.mid.ru/ru/foreign_policy/integracionnye-struktury-prostranstva-sng/1701727/?ysclid=lca8b2l3km815740085

[17] Алма-Атинская декларация, 21 декабря 1991 г., https://www.mid.ru/ru/foreign_policy/integracionnye-struktury-prostranstva-sng/1701727/?ysclid=lca8b2l3km815740085

Դժվար չէ նկատել, որ այդ փաստաթղթում միջազգային իրավունքի սկզբունքների շարքում նշվում են նաև այն երեք սկզբունքները (ինքնորոշման իրավունք, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունք և տարածքային ամբողջականության սկզբունք), որոնք 2007թ. Մինսկի խմբի համանախագահների առաջարկությամբ արձանագրվել են որպես Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմք ու այդպիսին են եղել մինչև 2022 թվականին համանախագահների համագործակցության խզումը: Հետևաբար, ԱՊՀ ստեղծման մասին Ալմա-Աթայի հռչակագիրը ոչ մի հակասություն չունի միջազգային իրավունքի սկզբունքների, հետևաբար և Մադրիդյան սկզբունքների հետ: Ավելին, միջազգային իրավունքի տարրական սկզբունքներից մեկն արձանագրում է, որ բոլոր փաստաթղթերը, որոնք հակասություններ ունեն ՄԱԿ կանոնադրության և դիտարկվող հռչակագրից բարձր կարգավիճակ ունեցող այլ փաստաթղթերի նկատմամբ, իրավական ուժ չեն կարող ունենալ: Առավել ևս՝ Անկախ պետությունների համագործակցության մեջ չմտնող տարածքի առնչությամբ, քանի որ, երբ այդ հռչակագիրը ստորագրվում էր, Լեռնային Ղարաբաղում արդեն անցկացվել էր ինքնորոշման հանրաքվե և դրա հիման վրա ստեղծվել էր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Դժվար է հավատալ, որ Ռուսաստանի արտաքին գործերի նախարարն այս տարրական ճշմարտությունները չգիտի ու 14 տարի Մադրիդյան սկզբունքների վրա աշխատելուց հետո հանկարծ հիշել է 1991թ. ընդունված Ալմա-Աթայի հռչակագրի մասին: Կամ որ նրան շփոթեցրել է «ընդունելով և հարգելով միմյանց տարածքային ամբողջականությունն ու գոյություն ունեցող սահմանների անխախտելիությունը» արտահայտությունը: Իհարկե, «տարածքային ամբողջականություն» և «սահմանների անձեռնմխելիություն» եզրույթների հետ կապված բազմաթիվ են սպեկուլյատիվ քաղաքական մանիպուլյացիաները, հատկապես՝ տարբեր քաղաքական գործիչների ու բարձրաստիճան պաշտոնյաների «կատարմամբ», սակայն տարրական ճշմարտություն է, որ իրավական եզրույթների իմաստները ոչ թե որոշվում են քաղաքական աճպարարություններով, այլ ձևակերպված են համապատասխան փաստաթղթերի սահմանումներում: Իսկ **տարածքային ամբողջականության վերաբերյալ միջազգային իրավունքի սահմանումները միանգամայն հստակ են: Որպես միջազգային իրավունքի սկզբունքների համար կոդիֆիկացիոն (սահմանումներ տվող) փաստաթուղթ՝ «ՄԱԿ-ի կանոնադրության հիման վրա պետությունների միջև բարեկամական հարաբերություններին ու համագործակցությանը առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին**

հռչակագիրը» սահմանում է. «Պետության տարածքը չպետք է լինի ռազմական օկուպացիայի օբյեկտ՝ կանոնադրության դրույթների խախտմամբ ուժի կիրառման արդյունքում: Պետության տարածքը չպետք է լինի այլ Պետության կողմից ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման արդյունքում ձեռք բերելու օբյեկտ»[18]:

Համարժեք սահմանում է տվել նաև ԵԱՀԿ հիմնարար փաստաթուղթը՝ Հելսինկյան եզրափակիչ ակտը. «Պետությունները ձեռնպահ կմնան միմյանց տարածքները ռազմական օկուպացիայի օբյեկտ դարձնելուց կամ դրանց նկատմամբ այլ ուղղակի կամ անուղղակի ուժային միջոցներ կիրառելուց, որոնք հակասում են միջազգային իրավունքին, կամ ձեռքբերման օբյեկտ դարձնելուց՝ այդպիսի միջոցներով կամ դրանց կիրառման սպառնալիքով»[19]:

Այս սահմանումները արձանագրում են, որ տարածքային ամբողջականության սկզբունքի համաձայն՝ ՄԱԿ-ի (մյուս դեպքում՝ ԵԱՀԿ-ի) անդամ պետությունները չպետք է մեկ այլ անդամ պետության տարածքը ուժի կամ դրա կիրառման սպառնալիքով ռազմական օկուպացիայի ենթարկեն կամ ձեռք բերեն: Հետևաբար, երբ որևէ պետություն հայտարարում է, որ հարգում է մեկ այլ պետության տարածքային ամբողջականությունը, դրանով սոսկ պարտավորվում է ռազմական ագրեսիայի չդիմել մյուս պետության տարածքի նկատմամբ և միջազգային իրավունքով արգելված միջոցներով կամ դրանց կիրառման սպառնալիքով մյուս պետության տարածքը կամ դրա մի մասը ձեռք չբերել: Այսինքն՝ տարածքային ամբողջականության սկզբունքը մեկ անդամ պետության պարտավորությունն է այդ կազմակերպության անդամ մյուս պետությունների տարածքների նկատմամբ ագրեսիվ գործողություններ չանելու վերաբերյալ: Այդ պարտավորությունը բոլոր անդամ պետությունները, այդ թվում՝ նաև Հայաստանն ու Ադրբեջանը, ստանձնել են ՄԱԿ-ին և ԵԱՀԿ-ին անդամակցելիս ու դրա վերահաստատման կարիքը չկա: Միաժամանակ, ակնհայտ է, որ տարածքային ամբողջականության ճանաչումը ոչ մի կապ չունի մյուս պետության չափերի, վարչական բաժանումների ու կազմի հետ և որևէ երկիր լիազորություն կամ պարտավորություն չունի այլ անդամ պետության տարածքի չափը, սահմանները կամ այլ բնութագիր որոշելու: Միակ բանը, որ

[18] 2625 (XXV). Declaration on Principles of International Law Concerning Friendly Relations and Co-operation among States in Accordance with the Charter of the United Nations, http://un-documents.net/a25r2625.htm

[19] Helsinki Final Act, https://www.osce.org/helsinki-final-act

անդամ պետությունները պետք է անեն, իրենց միջև ընդհանուր սահմանի տեղադրությունը որոշելն է: Ընդ որում, այս ամենը բոլորովին չի նշանակում, որ որևէ պետության սահմանները փոփոխման ենթակա չեն: Միջազգային իրավունքի համաձայն՝ սահմանները կարող են փոփոխվել 2 դեպքում՝

1) երկու անդամ պետությունների միջև, եթե կա փոխադարձ համաձայնություն՝ առանց ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման,

2) եթե պետության տարածքում բնակվող որևէ ժողովուրդ որոշում է փոխել իր քաղաքական կարգավիճակը՝ ինքնորոշման իրավունքի հիման վրա:[20]

Ինքնորոշման իրավունքի կիրառման միակ սահմանափակումն այն է, որ դա չի կարելի անել ռազմական ագրեսիայի միջոցով: Այդ պատճառով Հյուսիսային Կիպրոսի և Սերբական Կրաինայի անկախության հռչակումները Արդարադատության միջազգային դատարանը համարել է ապօրինի, միջազգային իրավունքին հակասող, իսկ այդ հակամարտությունները՝ ոչ ինքնորոշման:[21]

Հետևաբար, ՄԱԿ անդամ պետությունների միջև հարաբերությունների կարգավորման համար նախատեսված տարածքային ամբողջականության սկզբունքը հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա տարածելու փորձերը միջազգային իրավունքի նորմերի կոպիտ ոտնահարումներ են՝ քաղաքական սպեկուլյացիայի նպատակով:

Այսպիսով, Պրահայի հայտարարությունում միմյանց տարածքային ամբողջականության ճանաչման վերաբերյալ Հայաստանի ու Ադրբեջանի դիրքորոշումների արձանագրումը կամ Ալմա-Աթայի հռչակագրի հիշատակումը որևէ կապ չունեն Արցախի քաղաքական կարգավիճակի, առավել ևս այն Ադրբեջանի կազմում ճանաչելու հետ: Ուրեմն ինչո՞ւ է Ռուսաստանի արտաքին գործերի նախարարը նման հայտարարություն անում: Ընդ որում, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության տարբեր պաշտոնյաներ (նախարարից մինչև

[20] 2625 (XXV). Declaration on Principles of International Law Concerning Friendly Relations and Co-operation among States in Accordance with the Charter of the United Nations, http://un-documents.net/a25r2625.htm

[21] Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo. ICJ Advisory Opinion, 22.07.2010, https://www.icj-cij.org/case/141
Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղ և Կոսովո. հակամարտություններ, բանակցություններ, աշխարհաքաղաքականություն, Երևան, 2012:

պաշտոնական ներկայացուցիչ Մ. Զախարովա) հաճախ օգտագործում են ևս մեկ համանման արտահայտություն «այն բանից հետո, երբ Հայաստանի ղեկավարությունը ճանաչել է Ղարաբաղն ադրբեջանական, ՌԴ-ին ուղղված պահանջները տեղին չեն»[22]՝ բացատրելու համար Արցախին առնչվող տարբեր խնդիրների վերաբերյալ Ռուսաստանի դիրքորոշումն ու գործողությունները: Կրկին հարց է առաջանում. մի՞թե նրանք չգիտեն միջազգային իրավունքի սկզբունքներն ու հիմնարար նորմերը: Մասնավորապես, որ որևէ պետություն, այդ թվում՝ նաև Հայաստանը, անկախ իր էթնիկ կազմից, չափերից, ռազմական կամ տնտեսական հզորությունից, աշխարհագրական դիրքից և այլն, լիազորություն չունի որոշելու Արցախի կարգավիճակը կամ ճանաչելու Արցախի՝ թեկուզ և դեռևս չճանաչված պետության, այս կամ այն պետությանը պատկանելը: Ընդ որում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն ավելի մեծ իրավունք չունի, քան, օրինակ, Բուրկինա Ֆասոն կամ Լաոսը: Հայաստանի ղեկավարության հայտարարությունները Արցախի վերաբերյալ սոսկ քաղաքական հայտարարություններ են, որոնք միջազգային իրավունքի առումով որևէ արժեք չունեն: Սակայն ակնհայտ է, որ երբ Հայաստանի ղեկավարությունը, տապալելով միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին լիովին համապատասխանող 14 տարվա բանակցային գործընթացը, կարգավորման հիմք ընդունելով խնդրի հետ որևէ առնչություն չունեցող 1991թ. ստորագրված Ալմա-Աթայի հռչակագիրը, ոտնահարելով միջազգային իրավունքը, հայտարարություններ է անում ի վնաս Արցախի, ու դա օգտագործում են Ալիևը, Բրյուսելը, Վաշինգտոնը, տրամաբանական է, որ Ռուսաստանը ոչ թե հանդես է գալիս այդ ոտնձգություններից Արցախը պաշտպանելու դիրքերից, այլ փորձում է ինքն էլ օգտագործել իրավիճակն իր հետաքրքրություններից բխող նպատակներով: Ուրեմն առաջնային խնդիրը ոչ թե Ռուսաստանի դիրքորոշումներն են, որոնք հետևանք են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի նկատմամբ 2018թ. Հայաստանի իշխանությունների դիրքորոշման արմատական փոփոխության, այլ թե ինչու են Հայաստանի ներկայացուցիչները ստորագրել Պրահայի անհեթեթ հայտարարությունն ու հետագայում էլ ավելի առաջ գնացել, գերազանցել իրենց լիազորություններն ու հայտարարել Արցախը Ադրբեջանին պատկանող:[23]

---

[22] Այն բանից հետո, երբ ՀՀ իշխանությունները Ղարաբաղն ադրբեջանական են ճանաչել, ՌԴ-ին ուղղված պահանջները տեղին չեն. Զախարովա, 02.08.2023:

[23] Հայաստանը ճանաչում է 86,600 քկմ տարածք ունեցող Ադրբեջանի ամբողջականությունը, https://www.tert.am/am/news/2023/05/17/pashinyan-reykyavik/3938553

Հետևաբար, իրավական բաղադրիչի հարթությունում որևէ փոփոխություն չի եղել և քաղաքական մանիպուլյացիաների հետ կապված հարցադրումների բացատրությունները պետք է փնտրել քաղաքական բաղադրիչի հարթությունում:

Քաղաքական բաղադրիչ

Քաղաքական բաղադրիչի փոփոխությունների մեկնակետը, բնականաբար, 2018թ. իշխանափոխությունից հետո Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշման արմատական փոփոխության մասին հայտարարությունն էր բանակցությունները զրոյական կետից սկսելու վերաբերյալ, ինչը բանակցային գործընթացի խափանման պատճառ դարձավ, դա էլ՝ ադրբեջանաթուրքական ռազմական ագրեսիայի առիթ:[24] Այդուհանդերձ, Մինսկի խմբի շրջանակներում բանակցային գործընթացը վերականգնելու հնարավորությունները պահպանվում էին, քանի որ անգամ 2020թ. նոյեմբերի 9-ի հայտարարության հիման վրա հրադադարի հաստատումից հետո մինչև 2021թ. ապրիլ համանախագահները մի քանի անգամ հայտարարել են, որ հակամարտությունը կարգավորված չէ, մասնավորապես, չի լուծվել Արցախի վերջնական կարգավիճակի հարցը և բանակցությունները պետք է վերականգնվեն հայտնի երեք սկզբունքների ու վեց տարրերի շրջանակներում մշակված փաստաթղթի հիման վրա:[25] Սակայն Հայաստանի ներկայացուցիչներն ամեն գնով փորձում են արժեզրկել նախընթաց բանակցային գործընթացը, նենգափոխել դրա էությունն ու փաստաթղթի բովանդակությունը՝ իրենց նպատակը հայտարարելով «խաղաղության պայմանագիրը»: Թեև զգուշացվում էր, որ մի քիչ Մոսկվայում, մի քիչ Բրյուսելում, մի քիչ Վաշինգտոնում հանդիպումները՝ առանց միջազգային իրավունքի հիման վրա միջնորդական լիազորություն ունեցող կազմակերպության հովանու, առանց համապատասխան ձևաչափի, համապատասխան գիտելիքներ ու փորձ ունեցող

[24] Թորոսյան Տ., 2020թ. պատերազմ. նախադրյալները, հետևանքները և աղետի հաղթահարման հնարավորությունները, https://luys.am/img/artpic/small/17421d60c00deb99e93e2020Թ.-ՊԱՏԵՐԱԶՄ.-ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ-ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ-ԵՎ-ԱՂԵՏԻ-ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ-ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.pdf.

[25] Joint Statement by the Heads of Delegation of the OSCE Minsk Group Co-Chair Countries, 3 December 2020, https://www.osce.org/minsk-group/472419
Statement of the OSCE Minsk Group Co-Chairs , https://www.osce.org/minsk-group/473649, 14 December 2020
Statement of the OSCE Minsk Group Co-Chairs , https://www.osce.org/minsk-group/483416, 13 April, 2021

միջնորդական առաքելության, խնդիրների լուծման սկզբունքների շրջանակի սահմանման, փոխադարձ պարտավորությունների շրջանակի սահմանման և սեփական բանակցային մասնագիտական խմբի ձևավորման ոչ մի դրական արդյունք չեն տալու, սակայն դրանք համառորեն շարունակվում են՝ հանգեցնելով նորանոր կորուստների: Չափազանց ծանր իրավիճակում հայտնված Հայաստանի Հանրապետությունն արտաքին հարաբերություններում մատնվել է ինքնահոսի: «Բանակցությունները» վերածվել են ներքին օգտագործման գործիքի՝ կեղծ խոստումներով ու անհիմն «գաղափարներով»: Առավելագույնը, որ արվում է, ներքին լսարանին ուղղված պարզունակ հայտարարություններն են, աննպատակ դիմումներն այս կամ այն միջազգային կազմակերպությանն ու Արդարադատության միջազգային դատարանին: Աննպատակ, քանի որ չկա աշխատանք այդ կազմակերպությունների ու դրանց կառույցների, անդամների հետ, չկա հստակ նպատակադրում ու դրան տանող ուղու մասին պատկերացում, չկան գիտելիքներ և ունակություններ այդ ամենը անելու համար: Բնական է, որ չկա նաև որևէ դրական արդյունք: Փոխարենը կա ամենօրյա գահավիժում: Թշնամին օկուպացրել է Հայաստանի Հանրապետության տարածքն ու մտադրություն չունի ընկրկել, 2022թ. դեկտեմբերից ամբողջությամբ շրջափակել է Արցախը, նորանոր պահանջներ է ներկայացնում ու Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչներին թելադրում է քայլ առ քայլ կատարել իր ամենաանհեթեթ պահանջները, որոնք ոչ մի կապ չունեն ոչ միայն միջազգային իրավունքի, այլև տարրական ողջամտության հետ: Ընդ որում, մի կողմից՝ հայտարարելով, որ իրենք Արցախի վերաբերյալ որևէ որոշում ընդունելու լիազորություն չունեն, մյուս կողմից՝ ստորագրել են նոյեմբերի 9-ի հայտարարությունը և դրա հիման վրա Ադրբեջանին փոխանցել Քարվաճառի ու Քաշաթաղի շրջանները: Որևէ լիազորություն չունենալով Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող որևէ տարածքի կամ ժողովրդի վերաբերյալ, այսպես կոչված «խաղաղության պայմանագրի» վերաբերյալ «բանակցություններում» քննարկում են Արցախի «բնակչության անվտանգությանն ու իրավունքների պաշտպանությանը» վերաբերող հարցեր: Ակնհայտ է, որ նման ձևակերպում կիրառվում է միայն որևէ երկրում բնակվող ազգային փոքրամասնությունների վերաբերյալ: Պատճառը մեկն է՝ գիտելիքների ու փորձի իսպառ բացակայությունը: Իհարկե, որևէ երկրի ղեկավարություն չի կարող բոլոր հարցերի վերաբերյալ ունենալ մասնագիտական գիտելիքներ: Սակայն վաղուց միջազգային հարաբերություններում պարտադիր է, որ քաղաքական ղեկավարությունը յուրաքանչյուր քիչ թե շատ լուրջ բանակցությունների գնա վարագույրից այն կողմ աշխատող մասնագիտական խմբով, որը ցանկացած պահի կարող է տրամադրել հավաստի տեղեկանք ու կարծիք ցանկացած խնդրի

վերաբերյալ: Հակառակ դեպքում միջազգային իրավունքի փաստաթղթերի, նորմերի ու հասկացությունների վերաբերյալ պարզունակ պատկերացումները հանգեցնում են լուրջ անհաջողությունների ու աղետների, որոնց հետևանքները չափազանց դժվար է վերացնել:

Կա նաև երկրորդ խնդիրը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ղեկավարության պահվածքը նման խնդիրների վերաբերյալ: Վերջին հինգ տարիների իրադարձությունների ընթացքն աչքի առաջ ունենալով, խիստ վտանգավոր զարգացումների վերաբերյալ բազմաթիվ զգուշացումներն անտեսելով՝ տևական ժամանակ պաշտոնական Ստեփանակերտը որդեգրել է պաշտոնական Երևանի հայտարարությունները թութակի պես կրկնելու գործելակերպ: Չեն ընկալվել ո՛չ Մադրիդյան սկզբունքների մերժման կործանարար հետևանքները, ո՛չ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի երեք մշտական անդամ պետությունների ներկայացուցիչների համանախագահությամբ իրականացվող բանակցային գործընթացի խափանման, ո՛չ 2020թ. նոյեմբերի 9-ի հայտարարության բազմաթիվ թերությունների հնարավոր հետևանքները, ո՛չ Արցախի «բնակչության անվտանգության ու իրավունքների պաշտպանության» մասին հայտարարությունները՝ որպես Արցախի ինքնիշխանության նկատմամբ ոտնձգություն, ո՛չ խնդրի կարգավորման հետ ոչ մի առնչություն չունեցող Ալմա-Աթայի հռչակագրի՝ ասպարեզում հայտնվելու հետևանքները՝ կեղծ իրավական հիմքի ստեղծման նպատակով, և այլն: Դրա արդյունքում Արցախի ղեկավարությունն անգամ հայտարարությունների մակարդակով չի պաշտպանել Արցախի շահերը՝ որպես ինքնորոշվող պետություն: **Փաստորեն հայկական գործոնը հակամարտության կարգավորման գործընթացում լիովին դուրս է մղվել, որի պայմաններում այլ կողմերից աջակցություն ակնկալելը բացարձակապես իրատեսական չէ, իսկ դրա բացակայությունից բողոքելը անիմաստ գործ է:**

Իհարկե, միջազգային իրավունքի շրջանակներում այս կամ այն խնդրի ու դրա լուծումների վերաբերյալ դիրքորոշումների հարցում ՄԱԿ Անվտանգության խորհրդի անդամները, հատկապես մշտական անդամները, պարտավոր են գործել միջազգային իրավունքի հիման վրա, այլ ոչ թե Հայաստանի ղեկավարության հայտարարությունների ետևում թաքցնել իրենց դիրքորոշումները: Այդ գործելակերպը միայն Արցախի խնդրին կամ Ռուսաստանին չի վերաբերում: Դեռևս 70-ական թվականներին միջազգային իրավունքի հիման վրա խնդիրները լուծելու անհրաժեշտության մասին անվերջ հայտարարություններ անող Միացյալ

Նահանգներն ու իր արբանյակները պաշտպանում էին Ինդոնեզիայի ռազմական ագրեսիան Արևելյան Թիմորի նկատմամբ, որը, այդուհանդերձ, տասնամյակների դաժան պայքարից հետո անդամակցեց ՄԱԿ-ին՝ որպես անկախ պետություն: Այսօր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամներից երեքը՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, Միացյալ Նահանգները, չհարգելով անգամ Մինսկի խմբի շրջանակներում իրենց ներկայացուցիչների 14 տարվա աշխատանքը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղղությամբ՝ միջազգային իրավունքի սկզբունքների ճշգրիտ համապատասխանությամբ, ցինիկաբար գնում են այդ իրավունքը կոպտորեն ոտնահարող ճանապարհով: Շատ բնորոշ է ԱՄՆ պետքարտուղար Է. Բլինքենի գրառումը. «Երեկ ես խոսել եմ Ադրբեջանի նախագահ Ալիևի հետ, որ մեր խոր մտահոգությունը հայտնեմ Լեռնային Ղարաբաղում հումանիտար իրավիճակի վատթարացման կապակցությամբ: Միացյալ Նահանգները կոչ է անում բոլոր կողմերին շարունակել երկխոսությունը՝ կայուն խաղաղության համաձայնագրի հասնելու համար»[26]: «Հումանիտար վիճակի վատթարացումով» (իրենց պատկերացումով դա է գնահատականը իննամսյա լիակատար շրջափակման, որի հետևանքով երեխաներ են մահանում) իրենք մտահոգ են այնքանով, որ դա չվնասի «խաղաղության համաձայնագրի» հասնելու երկխոսությանը:

Այսպիսով, վերջին երկու տարիներին, Մինսկի խմբի համանախագահող երկրների պատկերացումները Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ, որոնք դրված էին իրենց ներկայացուցիչ համանախագահների 14 տարվա աշխատանքի հիմքում, և որին իրենց զորակցությունն են հայտնել ՄԱԿ-ը, ԵՄ-ն, ԵԽ-ն և այլ միջազգային կազմակերպություններ ու ազդեցիկ պետություններ, փոխարինվել են միջազգային իրավունքին կոպտորեն հակասող ցինիկ դիրքորոշումներով:

Իհարկե, հակամարտության կարգավորման գործընթացի զարգացումների վրա ազդել են նաև այլ հանգամանքներ, հատկապես ռուս-ուկրաինական պատերազմին առնչվող գործոնները. Մինսկի խմբի համանախագահները հայտնվել են բարիկադների տարբեր կողմերում, Ռուսաստանը ստիպված է լուծել իր շահերին ուղղակիորեն սպառնացող չափազանց բարդ խնդիր՝ պատերազմական

[26] Secretary Blinken's Call with Azerbaijani President Aliyev' (U.S. Department of State, July 30, 2023), https://www.state.gov/secretary-blinkens-call-with-azerbaijani-president-aliyev-14/.

գործողություններում հակառակորդ ունենալով ամբողջ Արևմուտքը՝ Միացյալ Նահանգների գլխավորությամբ, և այլն: Սակայն վճռորոշ է եղել այն հանգամանքը, որ հայկական գործոնը վերացել է բանակցային գործընթացում, ու դրա մյուս բոլոր դերակատարները փորձում են այդ հանգամանքն օգտագործել իրենց խնդիրների լուծման համար: Երբ դու չես պաշտպանում քո շահերը, այլ պարզունակ մոտեցումներով քանդում ես իրավական լուրջ հիմքեր ունեցող ձևաչափը, գործընթացը, դրա նպատակն ու 14 տարվա ընթացքում մշակված փաստաթղթերը, որևէ մեկը չի անի այն, ինչ դու ես պարտավոր անել, ու որևէ մեկը չի պաշտպանի քո շահերը: Այդ առումով երկրորդ սկզբունքային սխալը թույլ է տրվել 2020թ. նոյեմբերի 9-ի հրադադարի հաստատումից հետո: Տեղի ունեցած ռազմական ագրեսիայի, պատերազմական հանցագործությունների վերաբերյալ բազմաթիվ փաստերի առկայության պարագայում համապատասխան աշխատանք չարվեց միջազգային ատյաններում դրանց ամրագրման ու հակամարտության կարգավորման նպատակով օգտագործելու համար: Բոլոր ինքնորոշման հակամարտություններում միջազգային հանրությունը լուծումը պարտադրել է, երբ մետրոպոլիան նոր ռազմական ագրեսիա է նախաձեռնել: Իհարկե, այդ հանգամանքի օգտագործումը պահանջում է մեծածավալ բարդ աշխատանք, սակայն խնդրի լուծումը կունենար բացառիկ նշանակություն ինչպես Ղարաբաղյան հակամարտության կարգավորման տեսակետից, այնպես էլ իրական խաղաղության հաստատման: Վերջինիս ապահովման համար ոչ թե պետք է մանտրայի նման անընդհատ կրկնել՝ «խաղաղություն», «խաղաղության պայմանագիր»[27], այլ ստեղծել լծակներ դրան հասնելու համար: Դրանցից ամենահիրականը կարող էր լինել ռազմական ագրեսիայի և պատերազմական հանցագործությունների հանգամանքի օգտագործումն ու Մինսկի խմբի շրջանակներում բանակցությունների վերսկսմանն ուղղված իրական ջանքերը: Երբ Բաքուն համոզվեց, որ իր համար խիստ վտանգավոր այդ գործիքը Հայաստանը մտադրություն չունի օգտագործել, անցավ ակտիվ գործողությունների՝ ռազմական ագրեսիայով օկուպացրեց Հայաստանի տարածքի մի մասը, սպառնալիքներ ստեղծեց ամբողջ Սյունիքի ու Գեղարքունիքի համար, քննարկման առարկա դարձրեց այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» հարցը, պահանջներ ներկայացրեց «խաղաղության պայմանագրի» վերաբերյալ՝ խթանելով Մոսկվայի, Բրյուսելի ու

[27] Խաղաղությունն իմ համոզմունքն է. սա այն է, ինչին ես հավատում եմ. Նիկոլ Փաշինյան, 2.08.2023, https://news.am/arm/news/773603.html
Իսկապես, երկարաժամկետ, կայուն ու տևական խաղաղություն հաստատելու հնարավորություն կա. Փաշինյան, 03.08.2023, https://news.am/arm/news/773839.html,

Վաշինգտոնի մրցակցությունն այդ հարցում: Որևէ իրական ծրագրի, գաղափարի կամ նախաձեռնության բացակայությունը հանգեցրեց ներքին օգտագործման հայտարարությունների, ձևական դժգոհությունների՝ արտաքին աշխարհում բավարարվելով պասիվ դիտորդի դերակատարությամբ: Ակնհայտ է, որ Արցախի շրջափակման և դրան առնչվող մյուս հարցերում խաղաղապահներից ու Մոսկվայից դժգոհելուց առաջ օգտակար կլիներ հիշել, որ նոյեմբերի 9-ի հայտարարության ձևավորման հարցում Հայաստանի ներկայացուցիչը որևէ դերակատարություն չի ունեցել, մինչդեռ Ալիևը էական փոփոխություններ է մտցրել այդ փաստաթղթում: Եվ խաղաղապահների գործունեության այդ միակ իրավական հիմքը չի սահմանել ոչ նրանց կարգավիճակը, ոչ լիազորություններն ու պարտավորությունները, ոչ դրանց իրականացման մեխանիզմները: Հետևաբար, չսահմանված պարտավորությունների չկատարման ու չեղած մեխանիզմների չօգտագործման վերաբերյալ բողոքները կեղծ են ու անհիմն: Նույն հարթությունում են անհեթեթ կոչերն Արցախին՝ Բաքվի հետ ուղիղ հանդիպումների (բանակցությունների) վերաբերյալ: Առանց բանակցությունների կազմակերպման լիազորություններ ունեցող միջազգային կազմակերպության՝ ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի հովանավորության, առանց միջնորդական առաքելություն իրականացնողների, առանց օրակարգի ու ընթացակարգի նման կոչերը ոչ միայն անհիմն են, այլև Արցախի համար վիրավորական ու բանակցությունների բացակայությունն անուղղակիորեն Արցախի վրա բարդող: Ավելին, քանի որ Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչները շարունակաբար խոսում են «բնակչության անվտանգության ապահովման ու իրավունքների հարգման» անհրաժեշտության մասին, ապա ակնհայտ է, որ Բաքվի հետ Արցախի բանակցությունների նպատակը նրանք պատկերացնում են այնպես, ինչպես Բաքուն՝ «վերաինտեգրումը», քանի որ նման խնդիրներ արծարծում են միայն ազգային փոքրամասնությունների համար: Այսօր անգամ միջազգային մասնագիտական շրջանակները (Ցեղասպանության կանխարգելման Լեմկինի ինստիտուտ, Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազ և այլն) արձանագրում են, որ դրանով Արցախը դառնում է ցեղասպանության զոհ[28], ինչին լայնորեն

[28] Lemkin Institute Statement on Self-Determination of Armenians in Artsakh (South Caucasus): There is No "Peace" or "Prosperity" through Genocide, 24.11.2022, https://www.lemkininstitute.com/statements-new-page/statement-on-self-determination-of-armenians-in-artsakh-(south-caucasus)%3A-there-is-no-peace-or-prosperity-through-genocide
Luis Moreno Ocampo, Genocide against Armenians in 2023, Expert Opinion, New York, August 7, 2023, https://www.cftjustice.org/wp-content/uploads/2023/08/Moreno-Ocampo-Expert-Opinion.pdf

արձագանքել են հեղինակավոր պարբերականները:[29] Հետևաբար, պարզ է, թե ինչու է Ալիևը շտապում օր առաջ ստորագրված տեսնել այսպես կոչված «խաղաղության պայմանագիրը»՝ որպես ցեղասպանության իրականացման իրավական հիմք, որը ստորագրած լինի Հայաստանը:[30] Միաժամանակ, քանի որ նոյեմբերի 9-ի հայտարարությունը որևէ իրավական ուժ չունի, այլ միայն ստորագրողների մտադրություններն արձանագրող թուղթ է, Ալիևը ցանկանում է նաև «խաղաղության պայմանագրով» վավերացնել ադրբեջանաթուրքական ագրեսիայի արդյունքները՝ այն դարձնելով կապիտուլյացիայի լիարժեք վավերագիր:

Իհարկե, Հայաստանի կառավարության ղեկավարն արդեն տեսնում է երեք տարբեր մայրաքաղաքներում կազմակերպվող հանդիպումների անիմաստությունն ու աղետի շարունակական դառնալու սպառնալիքները և այլևս չի զսպում դժգոհությունները Եվրամիությունից:[31] Սկսել է տեսնել նաև «խաղաղության պայմանագրից» որևէ դրական հեռանկար ակնկալելու անիմաստությունը:[32] Սակայն միալար կրկնում է «քաղցր» մոլորությունը՝ «խաղաղություն», «խաղաղություն», «խաղաղություն»...[33]:

Իրավիճակի քաղաքական բաղադրիչի ամփոփ պատկերը դրսևորվեց ՄԱԿ-ի ԱԽ-ի օգոստոսի 16-ի նիստում, որին մասնակցում էին բոլոր շահագրգիռ կողմերը՝ բացառությամբ Արցախի:

---

[29] Ochab E. U. Lachin Corridor Blocade Starves Nagorno-Karabakh, https://www.forbes.com/sites/ewelinaochab/2023/08/08/lachin-corridor-blockade-starves-nagorno-karabakh/?sh=59b3955733b6; Ignatius D.., A humanitarian catastrophe is unfolding in the Caucasus, https://www.washingtonpost.com/opinions/2023/08/11/karabakh-armenia-azerbaijan-humanitarian-catastrophe/

[30] Թորոսյան Տ., Նոր աշխարհակարգի ձևավորման ազդեցությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վրա. ինքնորոշում, թե ցեղասպանություն, *Հայկական քաղաքագիտական հանդես,* 2022, 1(17) , 05-52

[31] «Աուդիտ» կոչվող փաստաթուղթ ենք պատրաստել. Փաշինյանը բրյուսելյան պայմանավորվածությունների մասին գաղտնիք բացահայտեց, 03.08.2023, https://news.am/arm/news/773608.html ,
Խաղաղությունն իմ համոզմունքն է. սա այն է, ինչին ես հավատում եմ. Նիկոլ Փաշինյան, 2.08.2023, https://news.am/arm/news/773603.html

[32] Տպավորություն է՝ Բաքուն մտադիր է խաղաղության պայմանագիր ստորագրել, հետո տարածքային պահանջներ առաջադրել ՀՀ-ին. Փաշինյան, https://news.am/arm/news/773834.html

[33] Իսկապես, երկարաժամկետ, կայուն ու տևական խաղաղություն հաստատելու հնարավորություն կա. Փաշինյան, 03.08.2023, https://news.am/arm/news/773839.html,

2. ՄԱԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի ՆԻՍՏԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՅԵԼԻ

Այդ հրատապ նիստի ընթացքն ու արդյունքներն ամբողջությամբ բացահայտեցին Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության գործունեության լիակատար սնանկությունը: Արտգործնախարարի վախվորած ելույթը[34] ի սկզբանե արձանագրեց, որ նիստի հրավիրման խնդրանքը եղել է ձևական, նման աշխատանքների մասին պատկերացում չունեցող ներքին լսարանին ուղղված քայլ և բոլորովին էլ նպատակ չունի պաշտպանելու ցեղասպանության ենթարկվող Արցախի շահերը. «**Այսօր ես այստեղ եմ հայցելու այս հեղինակավոր կառույցի աջակցությունը մեր տարածաշրջանում արդար և համապարփակ խաղաղության և կայունության հասնելու հեռանկարը պահպանելու հարցում... Հայաստանը միջազգային հանրության աջակցությամբ ջանք չի խնայել մեր տարածաշրջանում խաղաղության և կայունության հաստատման համար:** Եվ կարծում եմ, որ այսօր մենք դեռ հնարավորություն ունենք հասնելու ***այս նպատակին***: Սակայն **ԼՂ-ում առկա հումանիտար իրավիճակը մեծապես կարող է վատթարացնել խաղաղության հեռանկարները Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանում և դրանից դուրս**»: Պարզվում է, Հայաստանը մտահոգ է ոչ թե Արցախում ցեղասպանության ակնհայտ դրսևորումներով, այլ Հարավային Կովկասում արդար և համապարփակ խաղաղության ու կայունության հասնելու հեռանկարը պահպանելու հարցով: Արցախում խորացող իրավիճակն էլ հետաքրքիր է այնքանով, որ կարող է վատթարացնել խաղաղության հեռանկարները Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանում և դրանից դուրս: Ավելի անկեղծ և ցինիկ դժվար է ձևակերպել: Իհարկե, ներկաների մեջ դժվար թե գտնվի մեկը, ով հավատացել է այդ «վեհ» նպատակի անկեղծությանը, սակայն նրանցից շատերի համար դա լավ նշաձող դարձավ դատարկ խոսքերի ու իրական անգործության համադրման համար: Դժվար է հավատալ, թե ՀՀ արտգործնախարարը չգիտի, որ ՄԱԿ ԱԽ նիստն իրական արժեք է ստանում և կարող է գործնական իմաստ ու նշանակություն ունենալ միայն համապատասխան բանաձևի ընդունման դեպքում: Հետևաբար, հայտարարությունները, որ «Լաչինի միջանցքը պետք է բացվի, իսկ ինչ վերաբերում է այլ հնարավոր հաղորդակցություններին, դա պետք է լուծվի Բաքու-Ստեփանակերտ

[34] Ա. Միրզոյանը ներկայացրեց Հայաստանի ակնկալիքները ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդից, https://168.am/2023/08/17/1914280.html

երկխոսության միջազգային մեխանիզմի շրջանակներում, ...պետք է Լեռնային Ղարաբաղ գործուղել կարիքների գնահատման անկախ միջգերատեսչական առաքելություն և տուժած բնակչությանը տրամադրել մարդասիրական օգնություն»՝ առանց համապատասխան բանաձևի նախագծի ներկայացման, ակնհայտորեն դիտվում են սոսկ որպես տգեղ շոուի էժանագին կամուֆլյաժ: Այդ դեպքում դժգոհությունները մյուս դերակատարներից միանգամայն անտեղի են, քանի որ համապատասխանում են ոչ միայն մինչև այդ նիստը արտահայտած տեսակետներին, այլև Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի ու խնդրի կարգավորման հայաստանյան դիրքորոշմանը:

ՄԱԿ-ում Եվրամիության պատվիրակության գործերի հանձնակատարը ջանասիրաբար ոչ միայն թվարկեց[35] շեֆի՝ Շառլ Միշելի «ձեռքբերումները» «Հայաստանի ու Ադրբեջանի միջև հարաբերությունների նորմալացման գործընթացում», որոնց գագաթնակետը «Ադրբեջանի նախագահ Ալիևի և Հայաստանի վարչապետ Փաշինյանի վերահաստատումն էր իրենց հանձնառությունը խաղաղության գործընթացին՝ հարգելով միմյանց տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը 1992 թվականի Ալմաթիի հռչակագրի հիման վրա»: Միանգամայն տրամաբանական է, որ այս անհեթեթությանը պետք է հաջորդեր ևս մեկը՝ Ադրբեջանին «պարտադրելով» մի բան, ինչն ինքն է ցանկանում՝ «Ադրբեջանի իշխանություններն անհապաղ քայլեր պետք է ձեռնարկեն՝ ապահովելով քաղաքացիներին ապրանքների մատակարարումը Աղդամով»: Սակայն, անհեթեթությունը նման է դժբախտությանը՝ մենակ չի գալիս, և «արժեքների» ու «սկզբունքների» կազմակերպության ներկայացուցիչը պետք է նույնպես արձանագրեր, որ. «Ցավոք սրտի, Լեռնային Ղարաբաղում ներկայիս վատթարացող մարդասիրական իրավիճակը վնասում է խաղաղության գործընթացին»[36]:

ԱՄՆ ներկայացուցիչը նույնպես կրկնում է[37] իր ղեկավարի մի շարք անգամներ հնչեցրած տեսակետները: «Խաղաղությունը տարածաշրջանում պետք է ներառի Լեռնային Ղարաբաղում բնակվող անձանց իրավունքների և անվտանգության պաշտպանություն», այսինքն՝ Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղում բնակվող

---

[35] Լեռնային Ղարաբաղում վատթարացող մարդասիրական վիճակը վնասում է խաղաղության գործընթացին. ՄԱԿ-ում Եվրամիության պատվիրակության գործերի հանձնակատար, https://168.am/2023/08/17/1914284.html

[36] Նույն տեղում:

[37] ԱՄՆ-ն կողմերին, այդ թվում՝ Բաքվի պաշտոնյաներին և ԼՂ բնակչության ներկայացուցիչներին, ուղիղ բանակցությունների կոչ է անում, https://168.am/2023/08/17/1914277.html

անձանց պաշտպանության բանաձևը, որի «հեղինակային իրավունքը» պատկանում է Հայաստանի իշխանություններին: ԱՄՆ-ն նույնպես ամենակարևորը համարում է «խաղաղության գործընթացը» և անհայտ է, թե ում «կոչ է անում զսպվածություն ցուցաբերել ու անմիջապես դադարեցնել բոլոր քայլերը, որոնք խաթարում են այն»: ԱՄՆ ներկայացուցիչը կրկնեց «ուղիղ բանակցությունների կոչը Բաքվի պաշտոնյաների և Լեռնային Ղարաբաղի բնակչության ներկայացուցիչների միջև», «մոռանալով», որ նման կոչերը ցինիկ երեսպաշտություն են, եթե դրանց իրականացման համար չեն ընդունվում փաստաթղթեր՝ դրանց իրականացման միջազգային մեխանիզմներ ստեղծելու նպատակով:

Ռուսաստանի ներկայացուցիչն ավելի հեռուն գնաց[38]: Ոչ միայն հայտարարեց՝ «Հայաստանի և Ադրբեջանի հաշտեցումը հնարավոր չէ, եթե հստակ անվտանգության և իրավունքների երաշխիքներ չլինեն Լեռնային Ղարաբաղի բնակիչների համար՝ միջազգայնորեն ճանաչված սկզբունքների հիման վրա, Ադրբեջանի օրենքների համատեքստում», այլև կրկնում է իր արտգործնախարարի «հայտնագործությունը». «Այդ տրամաբանությունը բխում է վերջին համաձայնություններից, որոնք վերահաստատվել են Հայաստանի և Ադրբեջանի առաջնորդների միջև. յուրաքանչյուր կողմ ճանաչում է մյուսի տարածքային ամբողջականությունը՝ 1991 թվականի Ալմա Աթայի հռչակագրին համապատասխան»: Հեշտ է նկատել, որ Մոսկվան արդեն ոչ միայն Լեռնային Ղարաբաղի ժողովրդին համարում է ազգային փոքրամասնություն Ադրբեջանի կազմում, այլև նոր հայտնագործություն է անում՝ հռչակելով Ադրբեջանի օրենքների գերակայությունը միջազգային իրավունքի նկատմամբ:

Թեև եռավեկտոր հանդիպում-«բանակցությունների» այս երեք կազմակերպիչների դիրքորոշումները միմյանցից ինչ-որ չափով տարբերվում են, սակայն ակնհայտ է, որ ունեն ընդհանուր առանցքային մոտեցում՝ Լեռնային Ղարաբաղը պետք է լինի Ադրբեջանի կազմում, կարևորը ոչ թե Լեռնային Ղարաբաղում ցեղասպանության իրականացման ակնհայտ դրսևորումներ ունեցող իրավիճակն է, այլ այսպես կոչված «խաղաղության գործընթացը», որի հաջողության ապահովմանը չպետք է խանգարի Լեռնային Ղարաբաղի իրավիճակը: Կարելի է

[38] Հայաստանի և Ադրբեջանի հաշտեցումը հնարավոր չէ՝ առանց ԼՂ ժողովրդի համար հստակ անվտանգության երաշխիքների. ՄԱԿ-ում ՌԴ ներկայացուցիչ, https://168.am/2023/08/17/1914268.html

ենթադրել, որ կողմերից յուրաքանչյուրը կարծում է, որ այդ մոտեցման դեպքում ինքը կկարողանա ներկայանալ որպես խնդրի լուծման հովանավոր՝ մի կողմից՝ ամբողջությամբ իր ազդեցության ներքո պահելով Հայաստանը, մյուս կողմից՝ շահելով Ադրբեջանի «համակրանքը»՝ Արցախը վերադարձնելով նրա կազմ: Ակնհայտ է, որ այս ընթացքի հիմքում ընկած մոտեցումը նախ բարձրաձայնել են Հայաստանի ներկայացուցիչները՝ մինչ այդ չորս տարի խարխլելով դրան հակոտնյա սխեման, որը մինչև 2018թ. 14 տարի շարունակ կիրառվել է Մինսկի խմբի շրջանակներում:

ԱԽ մյուս մշտական անդամների՝ Միացյալ Թագավորության ու Չինաստանի դիրքորոշումներն արտացոլում էին ընդհանուր տրամադրությունները՝ մեկ տարբերությամբ. եթե Միացյալ Թագավորության ներկայացուցիչն ընդգծում էր Արևմուտքի ջանքերը[39], ապա Չինաստանի ներկայացուցիչը[40]՝ Ռուսաստանի:

Ֆրանսիայի ու Մալթայի ներկայացուցիչների ելույթները եզակի էին առարկայական հարցադրումների տեսակետից ու նպաստավոր էին Լեռնային Ղարաբաղի համար: Եթե առաջինը «դատապարտեց Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակումը և ...կոչ արեց, որպեսզի վերսկսվեն բանակցությունները՝ ուղղված բոլոր չլուծված խնդիրների լուծմանը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության իրավունքների և անվտանգության հարցերին»[41], ապա երկրորդը միակն էր, որը հստակորեն մերժեց Աղդամի ճանապարհի օգտագործումը՝ որպես խնդրի լուծում:

ՄԱԿ ԱԽ հրատապ նիստի ինչպես նախապատրաստումը, այնպես էլ ընթացքն ու հետագա զարգացումները ապացուցեցին, որ Հայաստանը միջազգային հարաբերությունների սուբյեկտից վերածվել է օբյեկտի: Նիստի հրավիրումը դարձել էր ոչ թե միջոց՝ ծանր իրավիճակի հաղթահարման համար, այլ նպատակ՝ ներքին օգտագործման նպատակով:

Նիստի հրավիրման կապակցությամբ արված հայտարարությունում ՄԱԿ-ում Հայաստանի ներկայացուցիչը արձանագրում է. «Այս իրավիճակը կապված չէ

[39] Շատ կարևոր է, որ Արդարադատության միջազգային դատարանի որոշումը հարգվի՝ ապահովելով Լաչինի միջանցքով անխոչընդոտ տեղաշարժը. ՄԱԿ-ում ՄԹ ներկայացուցիչ, https://168.am/2023/08/17/1914271.html

[40] Չինաստանը Հայաստանին և Ադրբեջանին կոչ է անում առկա վեճերը լուծել դիվանագիտական ճանապարհով: https://168.am/2023/08/17/1914248.html

[41] Ֆրանսիան ՄԱԿ-ի ԱԽ նիստում դատապարտեց Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակումը և ապաշրջափակման կոչ արեց, https://168.am/2023/08/17/1914255.html

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հետ»:[42] Մինչդեռ իրականությունը ճիշտ հակառակն է՝ ցեղասպանության դրսևորումներ ունեցող իրավիճակը հետևանք է այն բանի, որ 14 տարի միջազգային բոլոր ատյանների հավանությանն արժանացած կարգավորման սխեման փոխարինվել է միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները ոտնահարող կեղծ «մոտեցումներով», որոնք խրախուսում են Ադրբեջանի գործողությունները: Բայց Հայաստանի արտգործնախարարի համար միջազգային իրավունքի բարձրագույն նորմի կարգավիճակ ունեցող սկզբունքը տաբու է: Եվ ոչ միայն դա: Թեև միջազգային մասնագիտական կառույցներ, հեղինակավոր լրատվամիջոցներ արդեն արձանագրում են, որ Լեռնային Ղարաբաղում տեղի է ունենում ցեղասպանություն, սակայն Հայաստանի արտգործնախարարը ոչ թե խոսում է այդ գործընթացի մասին, այլ անուղղակի հղումներ է անում դրա մասին գրողներին: Ոչ մի խոսք չի ասվել նաև 2020թ. ադրբեջանաթուրքական ագրեսիայի և դրա ընթացքում Ադրբեջանի ու Թուրքիայի իրականացրած պատերազմական հանցագործությունների մասին, որոնք նույնպես բազմիցս ունեցել են միջազգային հաստատումներ: Ինչպես վերը արձանագրվեց, ըստ Հայաստանի արտգործնախարարի, ԱԽ նիստի նպատակը ոչ թե Արցախում տեղի ունեցող ցեղասպանության դադարեցումն էր, այլ Հարավային Կովկասում խաղաղության ապահովումը:

ՄԱԿ ԱԽ նիստի բանաձևի նախագծի բացակայության վերաբերյալ արդարացումները վկայում են պետության կենսական խնդիրների նկատմամբ անլուրջ մոտեցման մասին: Արտաքին գործերի նախարարությունը դա բացատրում է այն հանգամանքով, որ. «Ընթացակարգային առումով ՄԱԿ Անվտանգության խորհրդի հրատապ նիստի ձևաչափը քննարկում է, այն չի ենթադրում ուղղակիորեն փաստաթղթի (բանաձևի կամ հայտարարության) ընդունում: Բացի այդ, ՄԱԿ ԱԽ բանաձևերի նախագծեր ներկայացնելու և քվեարկության դնելու նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք ունեն ՄԱԿ ԱԽ 15 (մշտական և ոչ մշտական) անդամները. Հայաստանը, չլինելով ՄԱԿ ԱԽ անդամ, նման իրավասություն չունի»:[43] Բերվել են հիմնավորումներ, որ սա թերի պատկերացում է ՄԱԿ ԱԽ ընթացակարգերի մասին:[44] Սակայն, եթե անգամ այնպես լիներ, ինչպես պնդում է Հայաստանի ԱԳՆ-ն,

[42] ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչը՝ Լեռնային Ղարաբաղի իրավիճակի մասին, 13.08.2023, https://news.am/arm/news/775370.html

[43] ՄԱԿ ԱԽ հրատապ նիստի ձևաչափը չի ենթադրում ուղղակիորեն փաստաթղթի ընդունում. ԱԳՆ, https://news.am/arm/news/776435.html

[44] ԱԳՆ-ի պնդումը կատարյալ անհեթեթություն է, կանխամտածված սուտ կամ տգիտություն. Վարդան Պողոսյան, https://168.am/2023/08/21/1916366.html

բացատրությունը պարզունակ է ու վկայում է ոչ միայն դրա ընդունման համար ջանքերի բացակայության, այլև նման աշխատանքի կազմակերպման անկարողության մասին: Իրականում առանց բանաձևի ընդունման քննարկումները որևէ հետևանք չեն ունենում իրադարձությունների զարգացման վրա, անուղղակիորեն խրախուսում են հանցագործ պետությանը: Միաժամանակ, նիստի հրավիրումն առանց լավ մշակված բանաձևի նախապատրաստման ու ՄԱԿ ԱԽ անդամների հետ նախնական լուրջ աշխատանքի, որի արդյունքում պետք է ձեռք բերվեն համաձայնություններ բանաձևի ընդունման վերաբերյալ, ակնհայտորեն խոստանում է լիակատար ձախողում: Դա տարրական ճշմարտություն է ցանկացած միջազգային կազմակերպությունում աշխատանքի, առավել ևս՝ ՄԱԿ ԱԽ հրատապ նիստի դեպքում,ինչը և ապացուցեց օգոստոսի 16-ի հրատապ նիստը:

3. Ի՞ՆՉ ԱՆԵԼ

ՀՀ իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ իրենք լիազորություն չունեն զբաղվելու Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորմամբ: Իհարկե, դա ճիշտ է, սակայն իրականությունը միանգամայն այլ է: Թեև իրավիճակն ու իրավասությունների բացակայությունը պահանջում էին ձեռնպահ մնալ հակամարտության կարգավորման վերաբերյալ որևէ քայլից, դրան առնչվող որևէ հայտարարությունից ու փաստաթղթի ստորագրումից, սակայն ստորագրվել է 2020թ. հայտարարությունը Հայաստանի սահմաններից դուրս, Արցախի վերահսկողության տակ գտնվող տարածքների վերաբերյալ, հայտարարվել է Արցախը Ադրբեջանի մաս լինելու վերաբերյալ, ու այդ տրամաբանությամբ մոտեցումներ են քննարկվում այսպես կոչված՝ խաղաղության պայմանագրի վերաբերյալ:: Որպես ՄԱԿ անդամ երկիր՝ Հայաստանը պարտավոր է հարգել (դա ՄԱԿ կանոնադրության պահանջն է) միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկը՝ ազգերի ինքնորոշման իրավունքը և չմիջամտել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործերին:

Ստեղծված բարդ իրավիճակից լուծումներ գտնելու նպատակով նախ պետք է վերհիշել, որ Մինսկի խմբի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի առաջին հատվածում՝ մինչև 2005 թվականը, ինքնորոշման իրավունքը չի դիտարկվել որպես կարգավորման հիմք: 90-ական թվականներին ներկայացված բանակցային փաստաթղթի երեք տարբերակներից ոչ մեկն այդ իրավունքի հիման վրա կազմված չի եղել և չի

նախատեսել Արցախի անկախացում:[45] Վճռորոշ նշանակություն է ունեցել հակամարտության կարգավորման վերաբերյալ Հայաստանի պաշտոնական դիրքորոշման փոփոխությունը 1998թ., երբ իշխանությունից հեռացան Արցախի անկախության ճանաչման հնարավորությունների վերաբերյալ թերահավատ մոտեցում ունեցող[46] ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանն ու իր գաղափարակիցները: Հետևաբար, քանի որ, ինչպես վերը նշվեց, միջազգային իրավունքի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման տեսակետից իրավական բաղադրիչում ոչինչ չի փոխվել, հնարավոր է գործընթացում իրականացնել շրջադարձ՝ վերադարձ ինքնորոշման իրավունքի վրա հիմնված լուծմանը, եթե տեղի ունենա քաղաքական բաղադրիչի արմատական փոփոխություն: Հաշվի առնելով Հայաստանում բազմակուսակցական համակարգի փլուզված վիճակն ու ընդդիմության անգործունակ վարքը, Երևանում դա հնարավոր չէ իրականացնել: Ուրեմն պետք է իշխանության փոփոխություն տեղի ունենա Արցախում: Առավել ևս, որ արդեն տեղի է ունեցել Ազգային ժողովի նախագահի փոփոխություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին շրջանում Ստեփանակերտում հրահրվում են խժդժություններ՝ ներգրավելով զինված մարդկանց, մասնավորապես՝ աշխարհազորայինների, Ա. Հարությունյանի հեռանալը դառնում է հրատապ անհրաժեշտություն, քանի որ Արցախի պետականությանը սպառնացող վտանգ է առաջացել ոչ միայն Ադրբեջանից, այլև այդ խժդժությունների կազմակերպիչներից ու իրականացնողներից: 2018թ. սկսած՝ Ա. Հարությունյանը թույլ է տվել բազմաթիվ ճակատագրական սխալներ, անվերապահորեն կատարել է պաշտոնական Երևանի բոլոր հրահանգները, Արցախի իշխանության նկատմամբ հավատը վերականգնելու համար նա պետք է հեռանա: Արցախի նախագահի նոր ընտրության կազմակերպում այս պայմաններում հնարավոր չէ և մինչ իրավիճակի նորմալացում անհրաժեշտ էլ չէ: Ակնհայտ է, որ պետք է ձևավորվի նոր կառավարություն, օրինակ՝ 90-ականներին գործած Պետական պաշտպանության կոմիտեի նման (սակայն ներկայիս խնդիրների լուծման անհրաժեշտությունից բխող մոտեցումներով ու սկզբունքներով աշխատող), որը կզբաղվի երկրի կառավարման խնդիրներով: Արցախի Ազգային ժողովի նորընտիր նախագահը պետք է ազատ լինի կուսակցական որոշումների կամ

[45] Թորոսյան Տ., ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները, https://www.luys.am/img/artpic/small/719d9a46a82fdcab7573LՂԳործընթաց.pdf
Թորոսյան Տ., Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում, Երևան, 2008թ.:
[46] Տեր-Պետրոսյան Լ., Պատերա՞զմ, թե՞ խաղաղություն. լրջանալու պահը: https://www.1in.am/2650577.html

առանձին անհատների ազդեցությունից: Կարող է թվալ, որ դա բավարար քայլ չի լինի, քանի որ Ազգային ժողովում Ա. Հարությունյանի կուսակցությունն ունի մեծամասնություն: Սակայն կարելի է չկասկածել, որ Ազգային ժողովում կգտնվեն Արցախի ճակատագրով իսկապես մտահոգ անհրաժեշտ թվով պատգամավորներ, ովքեր կորոշեն համախմբվել ու մինչև ճգնաժամի հաղթահարումը գործել կուսակցական պատկանելությունից վեր:

Սակայն սրանք միայն առաջին անհրաժեշտ քայլերն են, բայց ոչ բավարար: Նույնքան անհրաժեշտ քայլը պետք է լինի կառավարման մարմնին կից մասնագիտական աշխատանքային խմբի ստեղծումը, որը պետք է զբաղվի Արցախի արտաքին հարաբերությունների պլանավորման, ծրագրերի մշակման հարցերով: Դրանում պետք է ընտրվեն մարդիկ, ովքեր ունեն անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն, դա հավաստող առարկայական ապացույցներ, միջազգային կազմակերպություններում աշխատանքի փորձ, հեռու են արկածախնդրությունից: Աշխատանքային խմբում կարող են ընդգրկվել նաև օտարերկրացի մասնագետներ, որոնք ունեն հակամարտությունների կարգավորման ոլորտի մասնագիտական աշխատանքի փորձ: Առանցքային նշանակություն պետք է ունենա ՄԱԿ-ի հետ աշխատանքը՝ Գլխավոր քարտուղարի աշխատակազմից մինչև համապատասխան հանձնաժողովներ և այլ մասնագիտական կառույցներ: Աշխատանքներ պետք է ծավալվեն նաև ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի շրջանակներում: Արցախի գործողությունները, հայտարարությունները և նախաձեռնությունները պետք է լինեն հիմնովին մշակված, լիովին համապատասխանեն միջազգային իրավունքի նորմերին ու զերծ լինեն տարատեսակ տգետ ու արկածախնդիր մոտեցումներից[47]:

Արցախը պետք է դառնա իր ճակատագրի տերը և այդ ճակատագրի կերտման գլխավոր դերակատարը՝ ներգրավելով բոլոր կարող ուժերին, ովքեր պատրաստ են ծառայել այդ գործին:

Որևէ պետություն, այդ թվում՝ նաև Հայաստանը կամ որևէ միջազգային կազմակերպություն, իրավունք չունի որևէ ինքնորոշվող ժողովրդի, այդ թվում՝ Արցախի ժողովրդին, պարտադրել, որ ինքնորոշումը վերածվի «իրավունքների հարգման ու անվտանգության ապահովման» խնդրի: 14 տարի շարունակ բոլոր

[47] Օրինակ, Kalfayan Ph. R., The Minsk Process: Behind the Words and Principles, https://mirrorspectator.com/2019/03/07/the-minsk-process-behind-the-words-and-principles/

ազդեցիկ պետություններն ու միջազգային կազմակերպությունները բազմաթիվ փաստաթղթերում արձանագրել են, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ինքնորոշման հակամարտություն է, և այն պետք է լուծվի ինքնորոշման իրավունքի հիման վրա:

Մեկ անգամ արդեն ուժերի գերագույն լարումով ու անսահման նվիրումով հաջողվել է այն, ինչ հրաշք կարող էր համարվել, դարձնել իրականություն: Բայց դրանից բխող հրամայականը չընկալվեց՝ այն անշրջելի դարձնելու համար չապահովվեց նույնպիսի նվիրում և ուժերի լարում երկու հայկական պետությունների կառուցման ու կայացման հարցում: Երկրորդ անգամ պետք է փոխել քաղաքական իրավիճակն ու Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացի ուղղությունը՝ խուսափելու համար ավերիչ աղետի շարունակականությունից, պետք է կարողանալ շտկել մեջքը, ուղղել սխալներն ու թերությունները և կայացնել երկրորդ հրաշքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2018թ. տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում իրավիճակի շրջադարձային փոփոխության ենթարկված Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1. Հայաստանի նոր իշխանությունների՝ սեփական (զրոյական) կետից կարգավորման գործընթացը կառուցելու մոլուցքը հանգեցրեց Ռուսաստանը, Միացյալ Նահանգներն ու Ֆրանսիան ներկայացնող ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ ընթացած 30-ամյա կարգավորման ձևաչափի, 2007 թվականից մինչև 2021թ. կիրառված սկզբունքների ու այդ ընթացքում արձանագրված ձեռքբերումների (միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա կառուցված բանակցային բանաձև ու դրա հիման վրա մշակված փաստաթուղթ) խափանմանը և առիթ դարձավ 2020թ. ադրբեջանաթուրքական ագրեսիայի համար:

2. Հայաստանի իշխանությունները, հրադադարի հաստատման գործընթացի հետաձգումով շարունակաբար թուլացնելով դիրքերը, ստիպված եղան հանուն դրա հաստատման ստորագրել բազմաթիվ թերություններ ունեցող և միջազգային իրավունքի տեսակետից որևէ արժեք չունեցող՝ նոյեմբերի 9-ի հայտարարությունը՝

անգամ ստանձնելով իրենց լիազորություններից դուրս գտնվող պարտավորություններ:

3. Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության համար մարդկային, տարածքային, նյութական, բարոյական ու հոգեբանական աղետալի հետևանքների հանգեցրած այդ ագրեսիայի ընթացքում կոպտորեն ոտնահարվել են միջազգային իրավունքի սկզբունքներ ու նորմեր, իրականացվել են պատերազմական հանցագործություններ, ինչը պատերազմական գործողությունների դադարեցումից հետո հայկական կողմերից պահանջում էր համապատասխան աշխատանքներ ծավալել միջազգային ատյաններում այդ հանցագործությունների փաստաթղթավորման նպատակով: Անհրաժեշտ աշխատանքը հնարավորություն կտար կարգավորման գործընթացը վերադարձնել Մինսկի խմբի շրջանակներ, անհապաղ գործարկել բանակցային փաստաթղթով նախատեսված Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի որոշման մեխանիզմը՝ զսպելու համար Ադրբեջանի ագրեսիվ գործողություններն ու կանխելու հետագա զանգվածային հանցագործություններն ինքնորոշված Արցախի նկատմամբ, ինչպես դա տեղի է ունեցել Արևելյան Թիմորում, Հարավային Սուդանում և այլն: Միաժամանակ, դա կզսպեր Ադրբեջանի շարունակական ագրեսիան ու հիմք կդառնար իրական խաղաղության համար:

4. Հայաստանի իշխանությունների ռազմավարական սխալները շարունակվեցին հրադադարի հաստատումից հետո նույնպես: Ենթարկվելով Ադրբեջանի նոր ագրեսիային 2022թ. սեպտեմբերին՝ այս անգամ արդեն Հայաստանի Հանրապետության տարածքի կորուստներով, նրանք զրոյական կետի հասցրին հայկական գործոնը ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում, այլև Ադրբեջանի հետ հարաբերությունների առնչությամբ կազմակերպվող եռավեկտոր հանդիպումների ընթացքում, որոնք նախաձեռնել են Մոսկվան, Բրյուսելը, Վաշինգտոնը: Հանդիպումները, որոնք կողմերը համարում են «բանակցություններ», որևէ միջազգային կազմակերպության հովանու ներքո չեն իրականացվում, դրանց չեն մասնակցում միջնորդական առաքելություններ, դուրս են մղել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափը, օրակարգը, սկզբունքներն ու խնդիրները, իրականացվում են կեղծ «գաղափարների», միջազգային իրավունքում որևէ նշանակություն չունեցող՝ 1991թ. Ալմա-Աթայի հռչակագրին հղումներով՝ դառնալով քաղաքական մանիպուլյացիաների հարթակներ: Արդյունքում Հայաստանի Հանրապետությունը հայտնվել է ծանր

անվտանգային մարտահրավերների առջև, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ ցեղասպանության: Դրան է տանում նաև միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներն ու նորմերը ոտնահարող «պետք է ապահովել Լեռնային Ղարաբաղի բնակիչների իրավունքների հարգումն ու անվտանգությունը» մոտեցումը, որը փորձում են պարտադրել պաշտոնական Երևանը, Մոսկվան, Վաշինգտոնը, Բրյուսելը:

5. Իրավիճակը հաղթահարելու նախապայմանն է դրա գլխավոր խոչընդոտի վերացումը: Պետք է լինի Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ Արցախի դիրքորոշումը ներկայացնող պաշտոնական մարմին, որը պետք է աշխատի միջազգային գործընկերների հետ: Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ներկայիս ղեկավարները տարբեր պատճառներով դա չեն կարող անել:

6. Հակամարտության կարգավորման գործընթացի առաջին փուլում (անցյալ դարի 90-ական թվականներ), երբ այդ ժամանակահատվածում Հայաստանի իշխանությունները նույնպես չէին պատկերացնում Արցախի անկախության միջազգային ճանաչման հնարավորությունները, 1998թ. խնդիրը լուծվեց իշխանության փոփոխությամբ և արմատական շրջադարձ տեղի ունեցավ բանակցային գործընթացում: Հայաստանում նման իրական փոփոխություն տեսանելի ապագայում չի երևում՝ ընդդիմության անգործունակության պատճառով: Միակ հնարավորությունը մնում է Արցախում իշխանության փոփոխությունը՝ հանուն այն բանի, որ Արցախը հնարավորություն ստանա ինքնուրույն որոշելու իր ճակատագիրը, ինչպես այլ ինքնորոշման հակամարտությունների դեպքում, այլ ոչ թե դառնա Հայաստան-Ադրբեջան առևտրի մանրադրամ: Դրա առաջին քայլ կարող է դիտարկվել այն, որ այլևս Ազգային ժողովի նախագահը չի ներկայացնում Ա. Հարությունյանի կուսակցությունը: Անհրաժեշտ է, որ Ա. Հարությունյանը հեռանա և ձևավորվի արտակարգ իրավիճակում երկրի կառավարման մարմին: Արցախի նոր իշխանությունները պետք է դառնան Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացում երկրի միակ ներկայացուցիչը, իսկ Հայաստանի իշխանությունը չպետք է միջամտի գործընթացին՝ Ադրբեջանի հետ քննարկելով միայն Հայաստան-Ադրբեջան սահմանազատման խնդիրները, այլ ոչ թե Արցախի կարգավիճակի հարցը:

7. Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը բնականոն հուն տեղափոխելու համար անհրաժեշտ պայման է կառավարման նոր

մարմնին կից բարձրակարգ մասնագետներից բաղկացած աշխատանքային խմբի ձևավորումը, որը պետք է ապահովի Արցախի արտաքին քաղաքականության մասնագիտական հիմքերի մշակումը երկու ուղղություններով: Դրանցից առաջինը հակամարտությունների կարգավորման լիազորություններ ունեցող միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ) և դրանց կառույցների հետ ակտիվ աշխատանքն է, երկրորդն այդ կազմակերպությունները ներկայացնող միջնորդների մասնակցությամբ բանակցություններն են Ադրբեջանի հետ:

8. Ադրբեջանի հետ բանակցություններն անհրաժեշտ են, սակայն իմաստավոր են միայն երկու պայմանի բավարարման դեպքում: Այդ բանակցությունները պետք է իրականացվեն միջազգային իրավունքի շրջանակներում միջնորդական առաքելություն իրականացնելու լիազորություն ունեցող միջազգային կազմակերպության ձևավորած ձևաչափով, խնդիրների քննարկման և դրանց լուծումների ձևակերպման հիմքը պետք է լինեն միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը, պայմանավորվածությունների իրագործումը երաշխավորի միջնորդական առաքելություն ստանձնած միջազգային կազմակերպությունը: Փաստաթղթային հիմքը պետք է դառնա ՄԱԿ Անվտանգության խորհրդի երեք մշտական անդամ երկրների ներկայացուցիչների՝ Մինսկի խմբի համանախագահների մշակած բանակցային փաստաթուղթն ու սկզբունքները:

9. Արցախի ներկայացուցիչները պետք է ունենան երկու անսակարկելի դիրքորոշում՝

- Արցախի վերջնական կարգավիճակը միջազգային իրավունքի հիման վրա պետք է որոշի Արցախի ժողովուրդը,
- Ադրբեջանը ռազմական ագրեսիայի և պատերազմական հանցագործությունների համար պատասխանատվության չի ենթարկվի միայն ԼՂԻՄ-ի սահմաններում գտնված տարածքները Արցախին վերադարձնելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը ճանաչելու դեպքում:

Այս ամենը լիովին համապատասխանում է միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին և իրականացնելի է համապատասխան աշխատանքի դեպքում, որը չանելու դեպքում Արցախը փրկելու այլ հնարավորություն կարող է և չլինել:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*